*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9555-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մայիսի 29-ի N ՆՉ/22.2/6709-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 30-ի N 06/3-8/18512-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռների (պատվաստանյութի պահման սառնարաններ, 260 տեղ, 21,258 կգ ընդհանուր քաշով, 199,740 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 21,000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ և պատվաստանյութ՝ իր լուծիչով, 87 տեղ, 855 կգ ընդհանուր քաշով, 422,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 3,222.61 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**2 հունիսի 2017 թվականի N Մ- 465 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9514-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մայիսի 29-ի N ՆՁ/22.2/6734-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 30-ի N 06/3-8/18507-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր պարագաներ՝ 2 տեղ, 89 կգ ընդհանուր քաշով, 1,943.60 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 664.76 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**2 հունիսի 2017 թվականի N Մ- 466 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 29-ի N 01.1/14-2/9462-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N ՆՁ/22.2/6778-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 30-ի N 06/3-8/18514-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության «Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտի վերահսկողության» դաշնային ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (ատոմային աբսորբցիոն լաբորատոր սպեկտրոմետրի մասեր, 1 հավաքածու, 302,301 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 հունիսի 2017 թվականի N Մ - 467 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9516-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մայիսի 31-ի N ՆՁ/22.2/6854-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մայիսի 30-ի N 06/3-8/18623-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ցյուրիխի էլեոնորեն հիմնադրամ - մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված ուսումնական մանեկենները (2 տեղ, 21.3 կգ ընդհանուր քաշով, 2,790 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՓԵԻՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**6 հունիսի 2017 թվականի N Մ - 468 – Ա**

**(Որոշումը ընդունվել է 2017 թվականի հունիսի 2-ի նիստին)**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 5-ի N 01.1/14-2/10002-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունիսի 5-ի N ՆՁ/22.2/7054-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի 2-ի N 06/3-8/19184-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Starkey Hearing foundation» բարեգործական կազմակերպության կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված միանվագ օգտագործման բժշկական պարագաները (6 տեղ, 144.70 կգ, 3,805.57 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, որից 2,111.87 ԱՄՆ-ի դոլար կազմում են փոխադրման ծախսերը, ՄՓԵԻՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 հունիսի 2017 թվականի N Մ- 469 -Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9561-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 1-ի N 06/3-8/18907-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից ձեռք բերված շինարարական ապրանքները (40 պալետ, 43,360 կգ ընդհանուր քաշով, 57,066.60 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը և այլ ծախսերը կազմում են 4,518 եվրո, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**2 հունիսի 2017 թվականի N Մ- 470 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9509-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մայիսի 31-ի N ԱԱՄ/ԱնՄ-1-2/5720-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 30-ի N 06/3-8/18505-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության[1] ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (39 տեղ, 7,054.70 կգ ընդհանուր քաշով, 52,984 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 2,984 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի**

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)**

Ն-2/7.14

Կոնտեյներների համարներն են՝ HLXU 646605-0: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 52984.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 2984.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 7054.70 կգ, տեղերի քանակը 39:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 80 | Զույգ | Կոշիկ | | 247.46 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 50 | Զույգ | Հողաթափ | | 139.64 | |
| 10 | Հատ | Բաճկոն | | 77.08 | |
| 80 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 170.80 | |
| 70 | Հատ | Տաբատ | | 556.33 | |
| 230 | Հատ | Շապիկ | | 1104.82 | |
| 15 | Հատ | Կանացի բլուզկա | | 37.45 | |
| 200 | Զույգ | Ձեռնոց | | 454.05 | |
| 350 | Հատ | Զուգագուլպա | | 196.92 | |
| 650 | Հատ | Շարֆ | | 1435.28 | |
| 25 | Հատ | Մանկական սվիտեր | | 44.78 | |
| 40 | Հատ | Մանկական գլխարկ | | 62.00 | |
| 130 | Հատ | Փափուկ խաղալիք | | 133.37 | |
| 8 | Հատ | Ձեռքի օճառ | | 0.52 | |
| 10 | Հատ | Սրբիչ | | 5.67 | |
| 60 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 42.06 | |
| 12 | Հատ | Ծածկոց | | 16.42 | |
| 80 | Զույգ | Կոշիկ | | 247.46 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 50 | Զույգ | Հողաթափ | | 139.64 | |
| 12 | Հատ | Բաճկոն | | 92.50 | |
| 80 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 170.80 | |
| 70 | Հատ | Տաբատ | | 556.33 | |
| 250 | Հատ | Շապիկ | | 1200.89 | |
| 14 | Հատ | Կանացի բլուզկա | | 34.95 | |
| 200 | Զույգ | Ձեռնոց | | 454.05 | |
| 350 | Հատ | Զուգագուլպա | | 196.92 | |
| 650 | Հատ | Շարֆ | | 1435.28 | |
| 30 | Հատ | Մանկական սվիտեր | | 53.74 | |
| 40 | Հատ | Մանկական գլխարկ | | 62.00 | |
| 130 | Հատ | Փափուկ խաղալիք | | 133.37 | |
| 8 | Հատ | Ձեռքի օճառ | | 0.52 | |
| 10 | Հատ | Սրբիչ | | 5.67 | |
| 60 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 42.06 | |
| 12 | Հատ | Ծածկոց | | 16.42 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 80 | Զույգ | Կոշիկ | | 247.46 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) ա. 2/7.14 |
| 40 | Զույգ | Հողաթափ | | 111.72 | |
| 10 | Հատ | Բաճկոն | | 77.08 | |
| 70 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 149.45 | |
| 70 | Հատ | Տաբատ | | 556.33 | |
| 200 | Հատ | Շապիկ | | 960.71 | |
| 10 | Հատ | Կանացի բլուզկա | | 24.96 | |
| 200 | Զույգ | Ձեռնոց | | 454.05 | |
| 350 | Հատ | Զուգագուլպա | | 196.92 | |
| 650 | Հատ | Շարֆ | | 1435.28 | |
| 25 | Հատ | Մանկական սվիտեր | | 44.78 | |
| 40 | Հատ | Մանկական գլխարկ | | 62.00 | |
| 130 | Հատ | Փափուկ խաղալիք | | 133.37 | |
| 7 | Հատ | Ձեռքի օճառ | | 0.46 | |
| 10 | Հատ | Սրբիչ | | 5.67 | |
| 50 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 35.05 | |
| 12 | Հատ | Ծածկոց | | 16.42 | |
| 80 | Զույգ | Կոշիկ | | 247.46 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 45 | Զույգ | Հողաթափ | | 125.68 | |
| 10 | Հատ | Բաճկոն | | 77.08 | |
| 80 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 170.80 | |
| 70 | Հատ | Տաբատ | | 556.33 | |
| 230 | Հատ | Շապիկ | | 1104.82 | |
| 10 | Հատ | Կանացի բլուզկա | | 24.96 | |
| 200 | Զույգ | Ձեռնոց | | 454.05 | |
| 350 | Հատ | Զուգագուլպա | | 196.92 | |
| 650 | Հատ | Շարֆ | | 1435.28 | |
| 25 | Հատ | Մանկական սվիտեր | | 44.78 | |
| 40 | Հատ | Մանկական գլխարկ | | 62.00 | |
| 130 | Հատ | Փափուկ խաղալիք | | 133.37 | |
| 8 | Հատ | Ձեռքի օճառ | | 0.46 | |
| 10 | Հատ | Սրբիչ | | 5.67 | |
| 60 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 42.06 | |
| 12 | Հատ | Ծածկոց | | 16.42 | |
| 80 | Զույգ | Կոշիկ | | 247.46 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 40 | Զույգ | Հողաթափ | | 111.72 | |
| 70 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 149.45 | |
| 60 | Հատ | Տաբատ | | 476.86 | |
| 200 | Հատ | Շապիկ | | 960.71 | |
| 10 | Հատ | Կանացի բլուզկա | | 24.96 | |
| 200 | Զույգ | Ձեռնոց | | 454.05 | |
| 350 | Հատ | Զուգագուլպա | | 196.92 | |
| 620 | Հատ | Շարֆ | | 1369.04 | |
| 20 | Հատ | Մանկական սվիտեր | | 35.83 | |
| 30 | Հատ | Մանկական գլխարկ | | 46.50 | |
| 130 | Հատ | Փափուկ խաղալիք | | 133.37 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Հատ | Ձեռքի օճառ | | 0.46 | ա. 7/2.14 |
| 10 | Հատ | Սրբիչ | | 5.67 | |
| 50 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 35.05 | |
| 10 | Հատ | Ծածկոց | | 13.68 | |
| 80 | Զույգ | Կոշիկ | | 247.46 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Միսիանի և Գորիսի տարածաշրջան) |
| 40 | Զույգ | Հողաթափ | | 111.72 | |
| 70 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 149.45 | |
| 60 | Հատ | Տաբատ | | 476.86 | |
| 200 | Հատ | Շապիկ | | 960.71 | |
| 10 | Հատ | Կանացի բլուզկա | | 24.96 | |
| 200 | Զույգ | Ձեռնոց | | 454.05 | |
| 350 | Հատ | Զուգագուլպա | | 196.92 | |
| 620 | Հատ | Շարֆ | | 1369.04 | |
| 20 | Հատ | Մանկական սվիտեր | | 35.83 | |
| 30 | Հատ | Մանկական գլխարկ | | 46.50 | |
| 130 | Հատ | Փափուկ խաղալիք | | 133.37 | |
| 7 | Հատ | Ձեռքի օճառ | | 0.46 | |
| 10 | Հատ | Սրբիչ | | 5.67 | |
| 50 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 35.05 | |
| 10 | Հատ | Ծածկոց | | 13.68 | |
| 80 | Զույգ | Կոշիկ | | 247.46 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 40 | Զույգ | Հողաթափ | | 111.72 | |
| 10 | Հատ | Բաճկոն | | 77.08 | |
| 80 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 170.80 | |
| 70 | Հատ | Տաբատ | | 556.33 | |
| 230 | Հատ | Շապիկ | | 1104.82 | |
| 15 | Հատ | Կանացի բլուզկա | | 37.45 | |
| 200 | Զույգ | Ձեռնոց | | 454.05 | |
| 350 | Հատ | Զուգագուլպա | | 196.92 | |
| 650 | Հատ | Շարֆ | | 1435.28 | |
| 25 | Հատ | Մանկական սվիտեր | | 44.78 | |
| 32 | Հատ | Մանկական գլխարկ | | 49.60 | |
| 130 | Հատ | Փափուկ խաղալիք | | 133.37 | |
| 7 | Հատ | Ձեռքի օճառ | | 0.46 | |
| 10 | Հատ | Սրբիչ | | 5.67 | |
| 60 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 42.06 | |
| 12 | Հատ | Ծածկոց | | 16.42 | |
| 80 | Զույգ | Կոշիկ | | 247.46 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 40 | Զույգ | Հողաթափ | | 111.72 | |
| 70 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 149.45 | |
| 60 | Հատ | Տաբատ | | 476.86 | |
| 200 | Հատ | Շապիկ | | 960.71 | |
| 10 | Հատ | Կանացի բլուզկա | | 24.96 | |
| 200 | Զույգ | Ձեռնոց | | 454.05 | |
| 350 | Հատ | Զուգագուլպա | | 196.92 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 600 | Հատ | Շարֆ | | 1324.88 | ձր. 7/2.14 |
| 20 | Հատ | Մանկական ավիտեր | | 35.83 | |
| 30 | Հատ | Մանկական գլխարկ | | 46.50 | |
| 130 | Հատ | Փափուկ խաղալիք | | 133.37 | |
| 7 | Հատ | Ձեռքի օճառ | | 0.46 | |
| 10 | Հատ | Սրբիչ | | 5.67 | |
| 50 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 35.05 | |
| 10 | Հատ | Ծածկոց | | 13.68 | |
| 80 | Զույգ | Կոշիկ | | 247.46 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 45 | Զույգ | Հողաթափ | | 125.68 | |
| 10 | Հատ | Բաճկոն | | 77.08 | |
| 80 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 170.80 | |
| 70 | Հատ | Տաբատ | | 556.33 | |
| 230 | Հատ | Շապիկ | | 1104.82 | |
| 10 | Հատ | Կանացի բլուզկա | | 24.96 | |
| 200 | Զույգ | Ձեռնոց | | 454.05 | |
| 350 | Հատ | Զուգագուլպա | | 196.92 | |
| 650 | Հատ | Շարֆ | | 1435.28 | |
| 25 | Հատ | Մանկական ավիտեր | | 44.78 | |
| 40 | Հատ | Մանկական գլխարկ | | 62.00 | |
| 130 | Հատ | Փափուկ խաղալիք | | 133.37 | |
| 7 | Հատ | Ձեռքի օճառ | | 0.46 | |
| 10 | Հատ | Սրբիչ | | 5.67 | |
| 60 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 42.06 | |
| 12 | Հատ | Ծածկոց | | 16.42 | |
| 35 | Զույգ | Կոշիկ | | 108.26 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 20 | Զույգ | Հողաթափ | | 55.86 | |
| 30 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 64.05 | |
| 30 | Հատ | Տաբատ | | 238.43 | |
| 100 | Հատ | Շապիկ | | 480.36 | |
| 120 | Զույգ | Ձեռնոց | | 272.43 | |
| 150 | Հատ | Զուգագուլպա | | 84.39 | |
| 300 | Հատ | Շարֆ | | 662.44 | |
| 10 | Հատ | Մանկական ավիտեր | | 17.91 | |
| 50 | Հատ | Փափուկ խաղալիք | | 51.30 | |
| 5 | Հատ | Սրբիչ | | 2.84 | |
| 30 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 21.03 | |
| 5 | Հատ | Ծածկոց | | 6.84 | |
| 50 | Զույգ | Կոշիկ | | 154.66 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 22 | Զույգ | Հողաթափ | | 61.44 | |
| 40 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 85.40 | |
| 40 | Հատ | Տաբատ | | 317.90 | |
| 130 | Հատ | Շապիկ | | 624.46 | |
| 120 | Զույգ | Ձեռնոց | | 272.43 | |
| 180 | Հատ | Զուգագուլպա | | 101.27 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 387 | Հատ | Շարֆ | | 854.54 | ձր. 7/2.14 |
| 10 | Հատ | Մանկական ավիտեր | | 17.91 | |
| 80 | Հատ | Փափուկ խաղալիք | | 82.07 | |
| 7 | Հատ | Սրբիչ | | 3.97 | |
| 40 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 28.04 | |
| 7 | Հատ | Ծածկոց | | 9.58 | |
| 35 | Զույգ | Կոշիկ | | 108.26 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 20 | Զույգ | Հողաթափ | | 55.86 | |
| 30 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 64.05 | |
| 30 | Հատ | Տաբատ | | 238.43 | |
| 130 | Հատ | Շապիկ | | 624.46 | |
| 120 | Զույգ | Ձեռնոց | | 272.43 | |
| 180 | Հատ | Զուգագուլպա | | 101.27 | |
| 350 | Հատ | Շարֆ | | 772.84 | |
| 10 | Հատ | Մանկական ավիտեր | | 17.91 | |
| 80 | Հատ | Փափուկ խաղալիք | | 82.07 | |
| 6 | Հատ | Սրբիչ | | 3.40 | |
| 40 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 28.04 | |
| 6 | Հատ | Ծածկոց | | 8.21 | |
| 111 | Զույգ | Կոշիկ | | 343.35 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| 20 | Զույգ | Հողաթափ | | 55.86 | |
| 102 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 217.77 | |
| 100 | Հատ | Տաբատ | | 794.76 | |
| 334 | Հատ | Շապիկ | | 1604.40 | |
| 305 | Զույգ | Ձեռնոց | | 692.43 | |
| 380 | Հատ | Զուգագուլպա | | 213.80 | |
| 350 | Հատ | Շարֆ | | 772.84 | |
| 36 | Հատ | Մանկական ավիտեր | | 64.49 | |
| 220 | Հատ | Փափուկ խաղալիք | | 225.70 | |
| 6 | Հատ | Սրբիչ | | 3.40 | |
| 40 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 28.04 | |
| 7 | Հատ | Ծածկոց | | 9.58 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 7054.70 | 52984.00 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2 հունիսի 2017 թվականի N Մ - 471 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-857-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 2-ի N 01.1/14-2/9927-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մայիսի 31-ի N 06/3-8/18799-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2015» ծրագրի մասին» N Մ-857-Ա որոշմամբ (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1205-Ա և 2016 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-997-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2017 թվականի մայիսի 26-ին կնքված N Ծ-09/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հեռուստամարաթոն - 2018»-ին նվիրված տարեկան նիստի աշխատանքն ապահովելու համար տպագրական ծառայությունների մատուցում՝ 5,510,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2 հունիսի 2017 թվականի N Մ - 472 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9519-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 31 -ի N 06/3-8/19682-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՖԻԼԻՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07905342) 2017 թվականի մայիսի 10-ին կնքված N 1593-100517 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շրջանակներում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության նախկին շենքի ճեմասրահի և Մատենադարանի ընդունելությունների դահլիճի մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 2,543,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Օֆիս Կլաս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00258847) 2017 թվականի մայիսի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շրջանակներում հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 1,587,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01544004) 2017 թվականի մայիսի 20-ին կնքված N 1649-220517 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շրջանակներում Մատենադարանի ընդունելությունների դահլիճի օդորակման համակարգի վերանորոգման ծառայությունների մատուցում՝ 3,030,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2 հունիսի 2017 թվականի N Մ - 473 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1 («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9520-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 31-ի N 06/3-8/18684-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՋԻՇԷՅ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02630313) 2017 թվականի մայիսի 11-ին կնքված N 1602-110517 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շրջանակներում ծայնալուսային սարքավորումների տրամադրում, սննդի մատուցում, բեմի ձևավորման, տպագրական և տրանսպորտային ծառայությունների մատուցում՝ 3,324,995 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՋԻՇԷՅ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02630313) 2017 թվականի ապրիլի 5-ին կնքված N 1363-271216 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շրջանակներում հյուրերի տեղափոխման ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 հունիսի 2017 թվականի N Մ-474-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 22-ի N 01.1/14-2/8968-17, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 23-ի N 06/3-8/17552-17 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի 19-ի N 02/14/8267-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 17,030,440 դրամ ընդհանուր արժեքով «Բնակելի տան կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2017 թվականի ապրիլի 20-ին կնքված՝ N 260417 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 17,030,440 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության



կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Ջամբազյանի կողմից

«12» մայիսի 2017թ.

«Բնակելի տան կառուցում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Հույսի ավան» թաղամասում կարիքավոր ընտանիքի համար բնակելի տան կառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Շվեյցարիայի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե, CH 5712, Ֆելդշտրասսե 9): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի «Հույսի ավան» թաղամաս, վարչական շենք, ՀՎՀՀ՝ 00068196): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, «Հույսի ավան» թաղամաս, սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 17,030,440 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Կարիքավոր ընտանիք, որի ընտրությունը կկատարվի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի կողմից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի ապրիլի 20-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքներ՝ 17,030,440 դրամ ընդհանուր արժողությամբ, նախատեսվում է ավարտել մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների իրականացման ծառայությունների մատուցում՝ 17,030,440 դրամ արժողությամբ, առանց ավելացված արժեքի հարկի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում Շվեյցարիայի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Կազմեց՝ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
իրավախորհրդատու Սերգեյ Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 հունիսի 2017 թվականի N Մ-475-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 22-ի N 01.1/14-2/8969-17, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 23-ի N 06/3-8/17568-17 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի 24-ի N 02/14/8704-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 5,713,378 դրամ ընդհանուր արժեքով «Երեխաների ուսուցման և զբաղվածության կոնտրոնի ստեղծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2017 թվականի ապրիլի 20-ին կնքված՝ N 250417 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 5,713,378 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության



կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«12» մայիսի 2017թ.

«Երեխաների ուսուցման և զբաղվածության կենտրոնի ստեղծում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Հույսի ավան» թաղամասում պահեստի վերակառուցում երեխաների ուսուցման և զբաղվածության կենտրոնի: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Շվեյցարիայի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե, CH 5712, Ֆելդշտրասսե 9): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի «Հույսի ավան» թաղամաս, վարչական շենք, ՀՎՀՀ՝ 00068196): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, «Հույսի ավան» թաղամաս, սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 5,713,378 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հույսի ավան» թաղամասի երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի ապրիլի 20-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 28-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Պահեստի տանիքի կառուցման և երեխաների ուսուցման ու զբաղվածության կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքներ՝ 5,713,378 դրամ ընդհանուր արժողությամբ, նախատեսվում է ավարտել մինչև 2017 թվականի դեկտեմբերի 28-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների իրականացման ծառայությունների մատուցում՝ 5,713,378 դրամ արժողությամբ, առանց ավելացված արժեքի հարկի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում Շվեյցարիայի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Կազմեց՝ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
իրավախորհրդատու Սերգեյ Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 հունիսի 2017 թվականի N Մ-476-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ ՉՀՐԿԻԶՎՈՂ ՊԱՀԱՐԱՆՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 22-ի N 01.1/80-2/8859-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 18-ի N 06/3-8/16934-17 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մայիսի 20-ի N 02/14/8417-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 38,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին չհրկիզվող պահարանների նվիրատվություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2017 թվականի ապրիլի 19-ին կնքված՝ N 1TM/T պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 5 հատ չհրկիզվող պահարանի ձեռքբերում՝ 38,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 04-2/17)
18 ապրիլի 2017թ.

Հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

« Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին չհրկիզվող պահարանների նվիրատվություն »

Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին չհրկիզվող պահարանների նվիրատվություն: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հոգևոր բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 38,500,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանություն: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի ապրիլի 18-ից մինչև 2017 թվականի հոկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Չհրկիզվող պահարանների ձեռք բերում՝ 38,500,000 դրամ: Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 2017 թվականի հոկտեմբերի 31-ը: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ից չիրկիզվող պահարանների ձեռք բերում՝ 38,500,000 դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնտեսական բաժնի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 հունիսի 2017 թվականի N Մ-477-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԾՆՆԴԱՏԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 2-ի N 01.1/14-2/9848-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 1-ի N 06/3-8/18912-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մայիսի 31-ի N 02/14/9161-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մայիսի 31-ի N ՆՁ/22.2/6855-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 491,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վանաձորի նոր կառուցված բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի ներքին և արտաքին հարդարում» ծրագիրը (կցվում է):

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**02 հունիսի 2017 թվականի N Մ-498- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-044-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 17-ի N 01.1/80-2/8473-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 16-ի N 06/3-8/16549-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-044-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 0033863) 2017 թվականի մայիսի 10-ին կնքված՝ N Գ-12/2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Լիգնոսպան» ատամնաբուժական դեղամիջոցի ձեռքբերում՝ 7,140,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**02 հունիսի 2017 թվականի N Մ-499- Ա**
**քաղ. Երևան**

## «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ ԻՆՖԵԿՑԻՈՆ-ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԲԸ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 23-ի N 01.1/14-2/9022-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մայիսի 24-ի N 02/14/8723-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 22-ի N 06/3-8/17453-17 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2017 թվականի մայիսի 20-ի N 01/3495-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից 2017 թվականին իրականացվող՝ 3,100,000 դրամ ընդհանուր արժեքով «Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի հակատուբերկուլոզային բաժանմունքի մասնակի վերանորոգում» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շինարար-97» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05510886) 2017 թվականի մայիսի 11-ին կնքված՝ N ՏԲ 01/2017 պայմանագրի N 1 հավելվածի նախահաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է «Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի հակատուբերկուլոզային բաժանմունքի մասնակի վերանորոգում՝ 2,625,150 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստա-



նի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին ու Գյումրու քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

*<<Հովարդ Կարագյոզյան>> Բժշկական,*
*Բարեգործական Հասարակական Կազմակերպություն*
*Գլխավոր Գործադիր Տնօրեն*
*Ռուզաննա Աղայանի կողմից*
«8» մայիսի, 2017թ.

# «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ ԻՆՖԵԿՑԻՈՆ-ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԲԸ-ի ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Ինֆեկցիոն-հակատուբերկուլոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի Հակատուբերկուլյոզային բաժանմունքի մասնակի վերանորոգման շինարարական աշխատանքներ՝ տուբերկուլոզով տառապող և նշված բաժանմունքում բուժում ստացող քաղաքացիների համար սանիտարահիգիենիկ և ավելի բարեկարգ պայմաններ ստեղծելու նպատակով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք, 381 Պարկ ԱվենյուՍաութ.), անհատներ՝ Նազարյան Անի Գևորգի (ՆՔ՝ 004670113, հասցե՝ ք.Երևան, Դավթաշեն 4-րդ թղմ., 2բ շ., բն. 6), Ղազարյան Էլեն Էմիլի (ՆՔ՝ 004081451, հասցե՝ ք.Երևան, Դավիթաշեն 3-րդ թղմ., 10շ., բն. 38) |
| 4 | Ծրագրիը կատարողը | <<Հովարդ Կարագյոզյան>> բժշկական, բարեգործական հասարակական կազմակերպություն, իրավաբանական հասցեն՝ ք.Երևան, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ-01533153: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Ինֆեկցիոն-հակատուբերկուլոզային հիվանդանոց» ՓԲԸ առողջապահության բնագավառ |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան Հիշատակի ընկերակցության կողմից համաձայն 10.12.2016թ. դրամաշնորհային պայմանագրի: 2017թ.-ին իրականացվելիք ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Ինֆեկցիոն-հակատուբերկուլոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի Հակատուբերկուլյոզային բաժանմունքի մասնակի վերանորոգման բարեգործական ծրագրի բյուջեն բաղկացած է անհատների նվիրատվության գումարներից, ինչը կազմված է հետևյալ կերպ՝ Ա. Նազարյանից 13.200,00 ՀՀ դրամ, Է. Ղազարյանից 80.000,00 ՀՀ դրամ և «Հովարդ Կարագյոզյան» բժշկական, բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներից՝ 3.006.800,00 ՀՀ դրամ, ընդամենը ծրագրի բյուջե՝ 3,100,000.00 ՀՀ դրամ: | |
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուն «Գյումրու Ինֆեկցիոն-հակատուբերկուլոզային հիվանդանոց» ՓԲԸ -ն և Հակատուբերկուլյոզային բաժանմունքում բուժվող մոտ 200 տուբերկուլոզով հիվանդները: | |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2017թ. մայիսի 11-ից մինչև դեկտեմբերի 20-ը ժամկետի համար: | |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Ինֆեկցիոն-հակատուբերկուլոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի Հակատուբերկուլյոզային բաժանմունքի մասնակի վերանորոգման աշխատանքներ: | |
| | | Նշված միջոցառումների իրականացման համար 2017թ. մայիսի 11-ից մինչև դեկտեմբերի 20-ը նախատեսված ֆինանսական միջոցներ 3,100,000.00 ՀՀ դրամ, ինչը բաշխված է հետևյալ ձևով. | |
| | | Հակատուբերկուլյոզային բաժանմունքի մասնակի վերանորոգում | 2,625,150.00 դր. |
| | | Գյումրու Ինֆեկցիոն-հակատուբերկուլոզային հիվանդանոցի բարեկարգման համար անհրաժեշտ աշխատանքներ, գույքի, պարագաների ձեռք բերում | 474,850.00 դր. |
| | | Ընդամենը | 3,100,000.00 դր. |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հակատուբերկուլյոզային բաժանմունքի մասնակի վերանորոգում, «Շինարար-97» ՍՊԸ՝ աշխատանքների իրականացման ժամկետն է 2017 թվականի մայիսի 11-ից մինչև հուլիսի 20-ը: | 2,625,150.00 դր. |
| | | Գյումրու Ինֆեկցիոն-հակատուբերկուլոզային հիվանդանոցի բարեկարգման համար անհրաժեշտ աշխատանքներ, գույքի, պարագաների ձեռք բերում | 474,850.00 դր. |
| | | Ընդամենը | 3,100,000.00 դր. |
| | | *ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու ակնկալվող գործարքները և համապատասխան պայմանագրերը պարբերաբար կներկայացվեն Ձեր քննարկմանը:* | |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ՀՀ առողջապահության նախարարություն և Շիրակի մարզպետարանների առողջապահության վարչություն: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Հովարդ Կարագյոզյան» հիշատակի ընկերակցությանը /ԱՄՆ/ և «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ խորհուրդին ամսական և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովին եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ՀՀ օրենսդրության շրջանակներում [illegible]ապահության նախարարություն, ՀՀ հարկային ծառայությանը ՀՀ օրենքով սահմանված հաշվետվությունների ներկայացում ամենամյա աուդիտ: |

Կազմեց՝ Լ.Այդինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**02 հունիսի 2017 թվականի N Մ-500- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության 2017 թվականի մայիսի 12-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 19-ի N 01.1/80-2/8640-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մայիսի 18-ի N 06/3-8/16867-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Օրրան-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 13-րդ ենթակետում «3,000,000» թիվը փոխարինել «1,000,000» թվով.

2) ծրագրի 10-րդ կետում լրացնել նոր ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20 | | «Էլիպս-ՋԻԷՅ» ՍՊԸ | Անվտանգության տեսախցիկների ձեռքբերում | 2,000,000 |

2. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02552842) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլիպս-ՋԻԷՅ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2017 թվականի մայիսի 12-ին կնքված՝ N 3TM/ORRAN պայմանագրի հավելվածում նշված տեսախցիկների ձեռքբերման և տեսահսկման համակարգի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,864,167 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**02 հունիսի 2017 թվականի N Մ-501- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍ-ՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) 2017 թվականի մայիսի 10-ի N 38 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 19-ի N 01.1/80-2/8641-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 18-ի N 06/3-8/16863-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1189-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

---

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մ/ճ-ի տնօրեն Կարեն Մանվելյանի կողմից,

(ստորագրություն)

«26» մայիսի 2017թ

Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի Արենի, Խաչիկ, Գնիշիկ (Մոզրով), Տաթև, Տաձատափ և Սվարանց համայնքներին աջակցություն ցուցաբերել ապրուստի դիվերսիֆիկացումը զարգացնելու համար՝ ստեղծելով խթաններ և այլընտրանքային ապրուստի միջոցներ վաստակելու հնարավորություններ՝ պահպանելու համար կենսաբազմազանությունը և էկոհամակարգային ծառայությունները, այսպիսով նվազեցնելու բնական ռեսուրսների ոչ կայուն օգտագործումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 որոշման |
| 3. | Բարեգործը | ***Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ),***<br>Հասցե՝ Am Sportplatz 30, 63791 Karlstein am Main, Germany, (Ամ Սփորտպլաթզ 30, 63791, Կառլշտեյն ամ Մայն, Գերմանիա)<br>Հեռ՝ +49 6188 99560<br><br>*և WWF-Գերմանիա:*<br>Հասցե՝ Reinhardtstraƺe 18 10117 Berlin, Germany (Ռեյնհարդշտրասե փողոց 18, 10117 Բեռլին, Գերմանիա)<br>Հեռ.՝ +49 30 31 17 77 0<br>+49 30 31 17 77 199 |
| 4. | Ծրագիրը կատարողը | ***Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մ/ճ (WWF-Հայաստան)***<br>ք. Երևան, Լյուքսեմբուրգի փ., 7շ., բն. 19 (իրավ.)<br>ք. Երևան, Պռոշյան 11 (գործ.)<br>ՀՎՀՀ՝ 00861992<br>Հեռ՝ +374 10 58 89 83 |

7/13.3

| | | |
|---|---|---|
| | | +374 10 54 61 56<br>Էլ. հասցե՝ office_am@wwfcaucasus.org |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայր՝ Վայոց Ձորի մարզի Գնիշիկ պահպանվող լանդշաֆտ և հարակից տարածքներ, Սյունիքի մարզի Որոտան գետի կիրճը և հարակից տարածքներ:<br>Բնագավառ՝ կենսաբազմազանության պահպանություն և համայնքների զարգացում» |
| 6. | Ծրագրի բյուջեն | 494,021 (չորս հարյուր իննսունչորս հազար քսանմեկ) Եվրո: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի մարզեր և հարակից համայնքներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.06.2015-31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| 1. Կադաստրային տվյալների վերանայման և վերլուծման, հողօգտագործման պլանավորման մասնակցային հանդիպումների կազմակերպման ծառայություններ, ինչպես նաև դրանց կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2015 - հոկտեմբեր 2015 | 5,853 |
| 2. հողօգտագործման պլանի մշակում | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 4,798 |
| 3. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի պահպանության կարգավիճակի օրինականացման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2015 – դեկտեմբեր 2015 | 3,047 |
| 4. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի գերակա պլանի մշակում | հուլիս 2015-սեպտեմբեր 2015 | 8,000 |
| 5. Թիրախային համայնքներում արոտավայրերի բարելավման և կայուն կառավարման միջոցների կիրառման ուղղված ծառայությունների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2016 –հունիս 2017 | 4,899 |
| 6. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքներում պահակակետերի տեղադրում, դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2016-նոյեմբեր 2016 | 8,712 |
| 7. «Տաթևի» և «Գնիշիկի» [illegible] տարածքների | հուլիս 2015 – դեկտեմբեր 2015 | 1,375 |
| [illegible]ների համար [illegible] (բ[illegible]գրական գործիքներ, հե[illegible]ակներ, հեռ[illegible]ության միջոցներ, [illegible], թամբեր, առաջ[illegible]ության պարագաներ, [illegible]ված տեսախցիկ[illegible] և այլն): Գործ[illegible]ության կազմակերպում, [illegible] և իրագործում | հունվար 2016 - դեկտեմբեր 2016 | 3,391 |
| | հունվար 2017 - դեկտեմբեր 2017 | 10,528 |
| 8. Տաթևի տարածաշրջանում էկոտուրիզմի ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցում (տեղեկատվական նյութերի և ցուցանակների պատրաստում, տուրիստական երթուղիների մշակում և բարելավում, ժամանցային տաղավարների պատրաստում, կանաչապատման աշխատանքներ), ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հոկտեմբեր 2016 – հոկտեմբեր 2017 | 22,149 |
| 9. Էկոտուրիզմի վերաբերյալ վերապատրաստման միջոցառումներին ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | ապրիլ 2016-հոկտեմբեր 2017 | 7,612 |
| 10. Արենի, Խաչիկ, Մոզրով թիրախային համայնքներում խմելու և ոռոգման ջրատարների վերականգնման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև գործունեության կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2015 – դեկտեմբեր 2017 | 45,150 |
| 11. Տաթև, Սվարանց և Տանձատափ թիրախային համայնքներում գյուղական ենթակառուցվածքի բարելավում (խմելու ջրատարների վերականգնում, փողոցների լուսավորում, աղբի կառավարում) | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 26,469 |
| 12. Խաչիկ համայնքի համար տնկիների ձեռք բերում | նոյեմբեր 2016 | 5,000 |
| 13. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի այցելուների կենտրոնի և գյուղմթերքի խանութի շենքի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում<br>Վերջինս պատկանելու է երեք համայնքների՝ Գնիշիկ, Խաչիկ և Արենի, կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին: | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 69,787 |
| Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների [illegible] | նոյեմբեր 2015 | |

| | | |
|---|---|---|
| համար ՈՒԱԶ 23632-148 մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերում | | |
| 14. Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի համար սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016-նոյեմբեր 2017 | 23,735 |
| 15. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար արևային չորանոցի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Այն պատկանելու է երեք համայնքների (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու է բացառապես անվճար հիմունքներով: | մայիս 2016-նոյեմբեր 2017 | 45,704 |
| 16. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Պատկանելու է Տաթև համայնքին և գործելու է բացառապես անվճար հիմունքներով: | մարտ 2016 – դեկտեմբեր 2016 | 35,642 |
| 17. Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար տարբեր կահավորանքի և սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2016-դեկտեմբեր 2017 | 20,425 |
| • գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար Pick-up ավտոմեքենայի ձեռք բերում<br>Մեքենան անհատույց հիմունքներով տրամադրվելու է Տաթև համայնքին և ծրագրի ավարտից հետո նույնպես ծառայելու է գյուղմթերքի ընդունման և փաթեթավորման կետի սպասարկման, ինչպես նաև համայնքի վերահսկողության տակ գտնվող «Սատանի կամուրջ» բնության հուշարձանի պահպանությանն ուղղված աշխատանքների իրականացման նպատակով: | հունիս 2017-նոյեմբեր 2017 | 15,000 |
| 18. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի և Սյունիքի թիրախային համայնքներում գյուղմթերքի տրամադրման, փաթեթավորման և իրացման [illegible]ների կազմակերպում և վերապատրաստման միջոցառումների և մասնակցային հանդիպումների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | սեպտեմբեր 2016-նոյեմբեր 2017 | 30,791 |
| 19. գրասենյակի վարձավաճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| 20. գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| 21. ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| 22. հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| 25. գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| 26. աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |
| 27. Ծրագրի ղեկավարի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 744<br>744<br>744 |
| 28. Հասարակայնության և կապի պատասխանատու անձի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 667<br>667<br>667 |
| 29. Ծրագրի օգնականի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 7,400<br>7,400<br>7,400 |

| | |
|---|---|
| 30. Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,600<br>1,600<br>1,600 |
| 31. Ծրագրի ադմինիստրատորի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,328<br>1,328<br>1,328 |
| Ընդամենը | | 494,021 |

10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

| Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| 1. Փաստաթղթերի հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռք բերում | 2015<br>2017 | 16,900<br>4,798 |
| 2. Շինարարական աշխատանքների ձեռք բերում | 2016-2017 | 159,845 |
| 3. Սարքավորումների ձեռք բերում | 2015-2016<br>2017 | 29,191<br>30,263 |
| 4. Տեղեկատվական նյութերի ձեռք բերում | 2017 | 22,149 |
| 5. Ուսուցողական ծառայությունների ձեռք բերում (դասընթացներ, վերապատրաստումներ) | 2016<br>2017 | 2,500<br>40,802 |
| 6. Ջրատարերի վերականգնման ծառայությունների ձեռք բերում | 2015 | 71,619 |
| 7. Տնկիների ձեռք բերում | 2017 | 5000 |
| 8. Ավտոմեքենայի ձեռք բերում | 2015<br>2017 | 13,930<br>15,000 |
| 9. գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| 10. գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| 11. ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| 12. հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| 13. գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| 14. աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

| Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| 1. գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| 2. գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| 3. ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| 4. հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |

7/13.3

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 5. գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| | | 6. աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |
| | | 7. Ծրագրի ղեկավարի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 744<br>744<br>744 |
| | | 8. Հասարակայնության և կապի պատասխանատու անձի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 667<br>667<br>667 |
| | | 9. Ծրագրի օգնականի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 7,400<br>7,400<br>7,400 |
| | | 10. Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,600<br>1,600<br>1,600 |
| | | 11. Ծրագրի ադմինիստրատորի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,328<br>1,328<br>1,328 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | • ՀՀ բնապահպանության նախարարություն<br>• Տարածքային կառավարման նախարարություն<br>• Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն (BMZ)<br>• Գերմանական համագործակցություն (GIZ)<br>• Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամ (CARD)<br>• Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (ՓՄՁ ԶԱԿ)<br>• OXFAM Ինթերնեյշնլ<br>• Արենի, Խաչիկ և Գնիշիկ/Մոզրով (Վայոց Ձոր), Տաթև, Տանձատափ և Սվարանց (Սյունիք) համայնքապետարաններ<br>• «Գնիշիկ» միջհամայնքային բնապահպանական հիմնադրամ | | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն (BMZ)՝ ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• WWF-Գերմանիա՝ ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով | | |



| | | |
|---|---|---|
| | | • ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով՝ հաշվետվությունների միջոցով<br>• Ներքին և արտաքին աուդիտի միջոցով |

Փաստաթուղթը կազմեց ծրագրերի ադմինիստրատոր Թամարա Շաբոյանը
Հեռ՝ 055-99-70-61

26.05.2017թ .

7/13.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**02 հունիսի 2017 թվականի N Մ-502- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N Մ-273-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9515-17 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մայիսի 31-ի N ՆՁ/22.2/6813-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 30-ի N 06/3-8/18622-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք և բժշկական պարագաներ՝ 70 արկղ, 591 կգ քաշով, 42,228.28 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,914.81 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2017-2018 թվականներին իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին» N Մ-273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Nr 7/2.16

<u>Մոտավոր բեռի ցանկը</u>

<u>համաձայն N 175671, 174027, 175126, 175646 հաշիվ-ապրանքագրերի</u>

| Նo | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Ալկոհոլային հիմքով ձեռքերի հեղուկ, լուծույթ, 100մլ, ֆլ. | 108 | 119.19 |
| 2 | Ալկոհոլային հիմքով ձեռքերի հեղուկ, լուծույթ, 500մլ, ֆլ. | 100 | 227.4 |
| 3 | Իմիպենեմ 500մգ / Սիլաստատին 500մգ, շիշ, փոշի, ներարկման համար | 2200 | 10100.2 |
| 4 | Դակլատասվիր դիհիդրոքլորիդ, 60 մգ. դհտ. | 1876 | 22195.09 |
| 5 | Ցինկի օքսիդ,10%, քսուք, 100գ, սրվակ | 6 | 6.84 |
| 6 | Պոլիվիդոն յոդ, վիրաբուժական սկրաբ, 4% լուծույթ, 125մլ, շիշ | 50 | 68.50 |
| 7 | Կապրեոմիցինի սուլֆատ, 1գ, փոշի, սրվակ | 110 | 453.20 |
| 8 | Ներարկման ջուր, 10 մլ, պլաստիկ ամպուլ. | 600 | 42.30 |
| 9 | Կանամիցինի սուլֆատ, 1գ, փոշի, սրվակ | 200 | 381.24 |
| 10 | Լևոֆլոքսացին, հեմիհիդրատ, 250մգ, դհտ. | 2900 | 138.04 |
| 11 | Պարացետամոլ (ացետամինոֆեն), 500մգ, դհտ | 1000 | 9.97 |
| 12 | Ազիտրոմիցին, 250մգ, դհտ. | 2376 | 930.60 |
| 13 | Ցիկլոսերին, 250մգ, կապսուլ | 1800 | 415.62 |
| 14 | Իբուպրոֆեն, 400մգ, դհտ | 2000 | 22.98 |
| 15 | Ռիֆամպիցին, 300մգ, դդ-պտճ, բլիստեր | 3000 | 1344.30 |
| 16 | Կլարիտրոմիցին, 500մգ, դհտ | 1806 | 478.59 |
| 17 | Օմեպրազոլ, 20մգ, դեղպտչ | 560 | 15.20 |
| 18 | Ֆլուկոնազոլ, 50մգ, կապսուլ | 300 | 49.47 |
| 19 | Ցիպրոֆլոկսացինի հիդրոքլորիդ, 250 մգ, դհտ. | 100 | 2.83 |
| 20 | Պրոմետազին հիդրոքլորիդ, 25 մգ, դհտ | 5000 | 95.85 |
| 21 | Պիրիդոքսին (վիտամին B6), 10մգ, դհտ. | 60000 | 2156.40 |
| 22 | Պրոտիոնամիդ 250 մգ | 2000 | 269.12 |
| 23 | Մոքսիֆլոքսացին հիդրոքլորիդ, համասար 400 մգ հիմք, դհտ | 300 | 135.39 |
| 24 | Մետոկլոպրամիդի հիդրոքլորիդ անհիդրուս, 10մգ, դհտ. | 1000 | 16.14 |
| 25 | Ակտիվացված ածուխ (ներծծման), 200 մգ, դդ-պտճ | 120 | 31.00 |
| 26 | Ֆլուկոնազոլ, 200մգ, կապսուլ | 300 | 37.80 |
| 27 | Ատազանավիր (ATV) 300 մգ/Ռիտոնավիր (r), 100 մգ, դհտ | 60 | 41.12 |
| 28 | Խալաթ, վիրաբուժական, ոչ գործվածքից, մեկանգամյա օգտագործման, XXL | 34 | 75.48 |
| 29 | Խալաթ, վիրաբուժական, ոչ գործվածքից, մեկանգամյա օգտագործման, մեծ | 57 | 115.14 |
| 30 | Ռեսպիրատոր (դիմակ) FFP2 կամ N95 (Fluidshienl), միջին չափս | 3325 | 1002.25 |
| 31 | Խալաթ, վիրաբուժական, ոչ գործվածքից, մեկանգամյա օգտագործման, XL | 54 | 111.24 |
| 32 | Բամբակ, հիդրոֆիլ, ռուլոն, 500գ | 100 | 230.00 |
| 33 | Կպչուն վիրակապ, ՆԵ, ստերիլ | 200 | 104.76 |
| 34 | Կպչուն ժապավեն, ռուլոն, 2սմ x 5մ | 240 | 79.20 |
| 35 | Մառլա կոմպրեսի, պարաֆինից, 10սմ x 10սմ ստերիլ | 30 | 4.41 |
| 36 | Ձեռնոցներ, վիրաբուժական, լատեքսյա, մեկանգամյա օգտ., ստերիլ, զույգ, 7,5 | 50 | 16.50 |
| 37 | Ձեռնոցներ, վիրաբուժական, լատեքսյա, մեկանգամյա օգտ., ստերիլ, զույգ, 7 | 100 | 32.00 |
| 38 | Ձեռնոցներ, զննման, լատեքսյա, մեկ անգամյա օգտ., փոշով չպատված, միջին չափս | 13600 | 349.52 |
| 39 | Ձեռնոցներ, վիրաբուժական, լատեքսյա, մեկանգամյա օգտ., ստերիլ, զույգ, 8,5 | 50 | 15.00 |
| 40 | Ձեռնոցներ, զննման, լատեքսյա, մեկ անգամյա օգտ., փոշով չպատված, փոքր չափս | 12000 | 308.40 |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | | 42228.28 |

N4 ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 01538594

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**02 հունիսի 2017 թվականի N Մ-503- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) (2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9521-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N ՆՁ/22.2/6798-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 31-ի N 06/3-8/18696-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից՝ «AiconPharmaceuticals» կազմակերպության միջնորդով ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ակնաբուժական վիրահատական պարագաներ՝ 1 տեղ, 8 կգ ընդհանուր քաշով, 2,220 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**02 հունիսի 2017 թվականի N Մ-504- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբու-ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) (3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9525-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մայիսի 31-ի N ՆՁ/22.2/6825-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 31-ի N 06/3-8/18690-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից՝ «AiconPharmaceuticals» կազմակերպության միջնորդով ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ակնաբուժական վիրահատական պարագաներ՝ 1 տեղ, 0.9 կգ ընդհանուր քաշով, 810 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, « ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**02 հունիսի 2017 թվականի N Մ-505- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) (4)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 30-ի N 01.1/14-2/9518-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մայիսի 31-ի N ՆՁ/22.2/6856-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 31-ի N 06/3-8/18683-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից՝ «AiconPharmaceuticals» կազմակերպության (ներակնային ոսպնյակներ, քարթրիջներ և դանակներ) և Beaver Visitec ընկերության (վիրահատական դանակներ) միջոցով ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ակնաբուժական պարագաներ՝ 9 տեղ, 68.5 կգ ընդհանուր քաշով, 174,606.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**02 հունիսի 2017 թվականի N Մ-506- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N Մ-327-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** («Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ )

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի մայիսի 25-ի N 5/08.2/51043-17 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 31-ի N 01.1/14-2/9690-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մայիսի 30-ի N 06/3-8/18504-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 21-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագրի մասին» N Մ-327-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի մայիսի 23-ին կնքված՝ N «ԾՀԱՊՁԲ-15/1 (ԿԲՀ-ԱԱՊ-ԱՊՁԲ-17/01-1) պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերով նախատեսված բենզինի ձեռքբերում՝ 1,859,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**6 հունիսի 2017 թվականի N Մ - 507 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հունիսի 2-ին)
**քաղ. Երևան**

**«ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 31-ի N 01.1/14-2/9694-17, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2017 թվականի հունիսի 6-ի N 01/3.1/3188-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 2-ի N 06/3-8/19183-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից անհատ բարերար Հարրի Կոնստանտին Օրբելյանի կողմից, «Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բեռի (ծայնամեկուսիչ վարագույր և անիվներ վարագույրի համար՝ 41.5 կգ ընդհանուր քաշով, 2,282 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ